"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 767-L

«11» հուլիսի 2022 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժա) ենթակետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, (այսուհետ՝ Թատրոն) կանոնադրության 25-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Թատրոնի հասարակայնության ու հանդիսատեսի հետ կապերի աշխատանքների որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, Թատրոնում անվտանգության ծառայությունը պատշաճ որակով իրականացնելու և այդ նպատակով Թատրոնի անվտանգության ծառայության, հասարակայնության ու հանդիսատեսի հետ կապերի աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) այդ ծառայությունների արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝

հրամայում եմ.

1. Թատրոնի «Մարքեթինգի և ՓիԱր» բաժինը վերանվանել «Հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի» բաժին:

2. Թատրոնի «Ադմինիստրատիվ բաժնի» «Հսկիչ» բառերը փոխարինել «Հանդիսատեսի օգնական» բառերով: Ստեղծել «Հանդիսատեսի ավագ օգնական» հաստիքը: «Հանդիսատեսի օգնական» հաստիքների քանակը սահմանել 18.5 հաստիք:

3. Թատրոնի «Ադմինիստրատիվ բաժինը», «Գրական-երաժշտական մաս» և «Թատրոնի թանգարանային բաժինը» միացնել «Հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժնին»:

4. Կրճատել «Ադմինիստրատիվ բաժնի» «Բաժնի պետ-գլխավոր ադմինիստրատոր», «Ադմինիստրատոր» և «Թատրոնի թանգարանային բաժին» «Բաժնի պետ» հաստիքները:

5. Վերոգրյալի հիման վրա «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 877-L հրամանով սահմանված և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից 2022 թվականի հունվարի 4-ին հաստատված «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«

	6. Հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժին						
1	Բաժնի պետ	1229	1.0	350.0			350.0
2	Մենեջեր՝ տեղեկատվության տարածման	1234	1.0	200.0			200.0
3	Ավագ մարքեթոլոգ	0	1.0	280.0			280.0
4	Նկարիչ-ձևավորող /ազդագրերի դիզայներ/	2220086	1.0	130.0			130.0
5	Ֆոտո-վիդեո օպերատոր և մոնտաժող	2360112	1.0	230.0			230.0
6	Հանդիսատեսի ավագ օգնական	0	1.0	130.5			130.5
7	Հանդիսատեսի օգնական	2160097	18.5	93.5			1729.75
9	Հանդերձապահ	1160032	1.0	93.5			93.5
10	Թանգարանագետ	2030031	0.5	100.0			50.0
11	Խմբագիր	2130001	0.5	180.0			90.0
12	Խմբագիր	2130001	0.5	140.0			70.0
13	Խմբագիր /երաժշտական/	2130001	1	110.0			110.0

»

6. Նպատակ ունենալով Թատրոնի անվտանգության ծառայության գործունեությունը համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության և Թատրոնի ներքին իրավական ակտերի պահանջներին, որը կարող են իրականացնել միայն համապատասխան լիցենզավորված մասնագիտական կազմակերպությունները՝ դադարեցնել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Անվտանգության ծառայություն» ստորաբաժանման գործունեությունը, որի հետևանքով կրճատել «Անվտանգության ծառայության պետի», «Անվտանգության ծառայության պահապանների» հաստիքները, իսկ «Հսկիչ /մուտքի անցակետի/» հաստիքները տեղափոխել «Անձնակազմի

կառավարման բաժին» և «Քաղպաշտպանության բնագավառի ծառայող» հաստիքը՝ հակահրդեհային ծառայություն:

7. Ուժը կորցրած ճանաչել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 877-L հրամանով սահմանված և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից 2022 թվականի հունվարի 4-ին հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքի 8-րդ, 9-րդ, 10.8-րդ և 13-րդ կետերը:

Այդ կապակցությամբ Թատրոնի «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 877-L հրամանով սահմանված և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից 2022 թվականի հունվարի 4-ին հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը և հաստիքացուցակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

8. Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ երկօրյա ժամկետում սույն հրամանով հաստատված կառուցվածքը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը:

9. Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո այդ մասին սահմանված կարգով հայտնել Թատրոնի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին, ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով իրականացնել նրանց իրազեկումները, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնել ազատման ենթակա աշխատողներին այլ աշխատանքեր առաջարկելու մասին:

10. Թատրոնի «Հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի» բաժնին՝ սույն հրամանով սահմանված Թատրոնի կառուցվածքի փոփոխությունը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատվելուց հետո՝ սույն հրամանը երկօրյա ժամկետում հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

11. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

Թատրոնի տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար՝ Կ. Դուրգարյան

«11» հուլիսի 2022 թ.
ք. Երևան